# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի և ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Արշակ Վարդապետյանի՝ Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ-Պետերբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ**

**Գործուղված պաշտոնատար անձինք՝** Կարեն Անդրեասյան և Արշակ Վարդապետյան:

**Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ արդարադատության նախարար և ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող:

**Գործուղման վայրը և ժամկետները՝** Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ-Պետերբուրգ), 2022թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը:

**Հրավիրող կողմը՝** Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Կոստանտին Չույչենկո:

**Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Պետերբուրգյան միջազգային իրավաբանական 10-րդ համաժողովին և ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 16-րդ նիստին:

**Քննարկված թեմաները՝** Քննարկվել են դատական ակտերի հարկադիր կատարմանը, հանրային ծառայությունների մատուցման ոլորտին, ՀՀ-ում ընթացքի մեջ գտնվող դատական և իրավական, հակակոռուպցիոն, ինչպես նաև քրեական արդարադատության բնագավառների բարեփոխումներին առնչվող և այլ հարցեր:

**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը և ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Արշակ Վարդապետյանը Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար

Կոստանտին Զույչենկոյի հրավերով Պետերբուրգյան միջազգային իրավաբանական 10-րդ համաժողովին և ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 16-րդ նիստին մասնակցելու նպատակով 2022թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը աշխատանքային այցով գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում (Սանկտ-Պետերբուրգ):

Սանկտ Պետերբուրգի 10-րդ հոբելյանական միջազգային իրավական համաժողովը իրավական, բիզնես, քաղաքական և իրավապահ համայնքների ներկայացուցիչների միջև երկխոսության ամենամեծ հարթակն է՝ ի շահ քաղաքացիների, բիզնեսի, իրավակիրառ պրակտիկայի բարելավման, օրենսդրական նախաձեռնությունների խթանման՝ իրավական մշակույթը զարգացնելու և ժամանակակից պայմաններում սոցիալ-տնտեսական ոլորտը կարգավորելու նպատակով:

Յուրաքանչյուր տարի բաց երկխոսությանը մասնակցելու և իրավական օրակարգի գլոբալ հարցերը քննարկելու նպատակով Համաժողովի աշխատանքներին ներգրավվում են տարբեր երկրների արդարադատության նախարարներ, միջազգային համբավ ունեցող իրավաբաններ, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, միջազգային մասնավոր իրավաբանական ընկերությունների ներկայացուցիչներ, սահմանադրական և վճռաբեկ դատարանների նախագահներ, փաստաբաններ և նոտարներ: Այս տարի Համաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով Սանկտ-Պետերբուրգ են ժամանել շուրջ 5000 մասնակիցներ ավելի քան 90 երկրներից:

Պետերբուրգյան միջազգային իրավաբանական 10-րդ համաժողովի առանցքային առաքելությունն է եղել նպաստել իրավունքի արդիականացմանը՝ այսօր տեղի ունեցող գլոբալ փոփոխությունների համատեքստում, այդ թվում՝ ոլորտում առկա խնդիրների լուծմանը:

Պետերբուրգյան միջազգային իրավաբանական համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել «Պետական արդարադատությունը մարդուն ծառայելուն ուղղված» նախարարների բաց քննարկում: Բաց քննարկման

շրջանակներում ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը հանդես է եկել ելույթով: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարը քննարկման մասնակցիներին ներկայացրել է հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում կատարված բարեփոխումները, նշված բնագավառներում միջազգային լավագույն փորձը ՀՀ-ում տեղայնացնելու հնարավորությունները, ինչպես նաև ընթացքի մեջ գտնվող և նախատեսվող աշխատանքները:

Հարկ է նշել, որ ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի 2005թ. օգոստոսի 26-ի որոշմամբ ԱՊՀ անդամ-պետությունների արդարադատության նախարարների խորհրդի նիստերն անցկացվում են տարին մեկ անգամ՝ ըստ նախորդ նիստի ընթացքում անցկացման վայրի շուրջ ձեռք բերված համաձայնության: 2021թ. դեկտեմբերի 15-ի ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 15-րդ նիստի Արձանագրության 6-րդ կետի համաձայն ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 16-րդ նիստը տեղի է ունեցել Պետերբուրգյան միջազգային 10-րդ համաժողովի շրջանակներում **սույն թվականի հունիսի 30-ին**:

ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 16-րդ նիստի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը հանդես է եկել ելույթով: Կարեն Անդրեասյանը իր ելույթում անդրադարձել է Արդարադատության նախարարության դերին և գործառույթներին: Կարեն Անդրեասյանը ներկայացրել է նաև արդարադատության, մասնավորապես՝ քրեական արդարադատության ոլորտում նախարարության կողմից իրականացված և ընթացքի մեջ գտնվող բարեփոխումների ծրագրերը:

Պետերբուրգյան միջազգային իրավաբանական համաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը հանդիպում է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության դատական համակարգի ղեկավարի սոցիալական և հանցագործությունների կանխարգելման գծով տեղակալ Ասղար Ջահանգիրի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը

քննարկել են հանձնումներին, դատապարտյալների փոխանցմանը, դատական հանձնարարությունների կատարմանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Արշակ Վարդապետյանը մասնակցել է Պետերբուրգյան միջազգային իրավաբանական 10-րդ համաժողովի շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին, քննարկումներին, որոնց ընթացքում ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարության առաջնահերթությունները: Բացի այդ, գործընկեր պետությունների արդարադատության նախարարությունների ներկայացուցիչների հետ քննարկել է նախարարությունների միջև առկա համագործակցության խորացմանն առնչվող հարցեր:

**ՀՀ արդարադատության նախարար**

Recoverable Signature

X

Karen Andreasyan

Signed by: ANDREASYAN KAREN 2009770196

**Կարեն Անդրեասյան**

**04.07.2022թ.**